և Մուրատ, երեքեանս զորս կամէին՝ առնէին նախա-
բար թագաւորի, թէ՛ առ պաղատն և թէ ի փառս նո-
րա, որ յետ Սօֆուն գնեն վէզիր զՄուրատն, որ էր
եէնկիչէր աղասի և ի տեղի նորա եդին զԴարա Զաւ-
ուշն և մեծ քէհա պէկ Մուստաֆա աղայ և այլք ի
գրուց, որք միակամ և միախորհուրդ, զոր յետոյ և
զՄէլէկն եդին, և որքան կար ունէին կամաց՝ անար-
գել արարին։ Բայց մինչ ցայժմ ի հարկատուաց այլա-
սեռից և մեր ինաս ոչ հասուցին և ոչ մի. քանզի
մինչև ցայժմ յաղայութիւն Դարա Զաւուշին բնաւ ոչ
զօլ ել և ոչ զայր մի զանեաց, այլ յոյժ զօրացն պահ-
պանութիւն և յամենայն տեղիս զուլլուխի պատուէր
սաստիկ՝ զի ստահակ մի՛ երևեսցի։ Բայց ոչ յագե-
ցան արծաթով, ոսկով և ընծայիւք յամենայն աշ-
խարհաց։ Նոր ինն սկսան քթան և բամպակ և հար-
կապահանջութիւն արկանել ի վերայ արհեստաւորաց՝
ի կողմէ վէզիրին, յորմէ լինէր հրաման. և վերջինս
ցած ըստակ էր, որ արկին ի վերայ արհեստաւորաց,
ճի ըստակին ոսկի մի պահանջեալ։ Եւ նոքա յարու-
ցեալ միաբանեցան՝ բամբ պէզէստանին և սարաճխա-
նին, և ամենայն քաղաքացիք գնացին առ վէզիրն և
ասեն. Քանի՞ քանի առնես զայս և ընդէ՞ր այսքան
թէքէլիֆ և զուլմ։ Եւ նա պահեաց զինքն և գտին
իւրեանց գլուխ զՍիաւուշ փաշայ՝ եկեալն ի Սիլիս-
տրայ և մուծին զնայ առ թագաւորն, և նա ասէ.
Զի՞ կեաս, հա՛ն զսանճախն զի զամբոխն ցրուեսցուք
և զհակառակորդս քո սպանցուք։ Զայս ասաց, զի
ունէր ոխ ընդ այլոց և հաճեցաւ զմիտս թագաւորին,
որում հաւատացեալ տայ զկնիքն վէզիրութեան՝ նմա։
Եւ հանեալ զսանճախն ըստ դէնին, զդրօշս առաջնոր-
դին իւրեանց և տնկեցին ի վերայ պարսպի տան ար-
քայի. և գոչէ մուֆտիկն ասելով. Ո՛վ տաճիկ է և
ի կողմ արքայի, մերձ առ սայ փութասցի գտանիլ։